

ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

ԱՐՈՎԵԱՆԻ ՄԱՀԻԱՆ ՇՈՒՐՋ

Մեր մէջ բանասիրութիւնը դարձել է շատախօսութիւն: Երկար ու բարակ քննել, դատել որեւէ նիւթի մասին առանց շօշափելի տեւալների՝ սովորական երեւոյթ է: Այդպիսի մի խնդիր է եւ իմ. Արովեանի մահւան շուրջը ստեղծւած բանավէճը:

Արովեանի մահւանից դեռ հարիւր տարի չի անցել, նրա անհետացման ժամանականից բազմաթիւ անձինք երկար ապրել, պատմել են մահւան պարագաները եւ խօսակցութեան նիւթերը շարունակում էին մինչեւ 1886-90 թւականները: Եւ էլ մէկը լսողներից, պատմեմ նրա ժամանակակից խօսքերը: Կարծեմ որ պիտի դադարեն երեւակայական ենթադրութիւնները, որոնք հասնում են անհեթեթութեան:

Ոմանք նրան համարելով թունդ ալդասէր եւ ուռաառեաց, հակառու ջաղաքականութիւն վարող իբրեւ թէ, նստեցնում են «Սեւ դառէթ» եւ քչում Սիրիւր: Ոմանք էլ Արովեանին դարձնելով թունդ յեղափոխական, որի համար նեղ էր Երեւան, փախցնում են Տաճկաստանով Եւրոպա խառնելու 1848-ի յեղափոխական կուռղներին...

Շատ նման ենթադրութիւն էլ անում էին եւ անում են այժմ էլ Ներսէս Աւետարակցու մասին, իբրեւ թէ հայոց թագաւորութիւն կազմակերպելու եւ խոստանալով ծոցում կը պահէր եւ դրա համար քչեց Բեսարաբիա, որ այդ պահանջից ձեռք քաշի. վերջն էլ թուաւորեցին, որ ծոցից թուղթը կորզեն եւ ոչնչացնեն. եւայլն եւայլն: Ոմանք էլ Արովեանին, իբրեւ «Վէրք Հայաստանի» վէպի հեղինակի՝ այնպիսի բարոյական բարձրութեան են հասցնում, մինչեւ իսկ աստուծային պանծացման, որին մերձենալ չեն կարող ոչ մի աշխարհային ցանկութիւն, ոչ մի կանացի անպարկեշտ գայթակղութիւն, մինչեւ իսկ «սիրոյ մարմանը տեղ չէր կարող ունենալ նրա յուզումնալից հոգու մէջ»: Մինչեւ իսկ «Երեւանի լոթինների վայել ենթադրութիւն է...» Արովեանի մահը համարել սիրոյ դոհ: (տես «Վէրք» Ա. Երես 12):

Ահա այս են այն անհեթեթ ենթադրութիւնները, որոնք իրական տեսլաներից զուրկ, սաւառնում են օդային բաւիղներում:

Այո՛, Արովեանը գրել է իր փառաւոր «Վէրք Հայաստանին», որի ամէն մի երեսից, ամէն մի տողից փչում է հայրենասէրի, ջերմ ազգասէրի շունչը, որը ողբերգում էր եւ այժմ էլ ողբերգում է ամէն մի ընթերցողի, նրան ներշնչում է տոյրեղող հայրենիքին ըստպաս դնելու իր կարողութիւնը, իր ուժերը: Տեսչական պաշտօնը մղում է նրան դէպի նոյն ուղին — դպրոցներ բանալ, աշակերտներ պատրաստել ու զարկ տալ հայացի կրթութեան:

Դժբախտաբար, այս փառաւոր գործունէութիւնը ընդհատուած է տարաբախտ մահով:

Այն սիրտը որ տոյրում էր ազգային սիրով, դժբախտաբար, տեղի է տալիս եւ այլ սիրոյ: Սէրերի խորքը զգացմունքների աշխարհն է, սառը խելքին չի հնազանդում: Եւ ահա մեր տեսուչը իր ընտանեկան պարկեշտու-

թիւնը դոհում է սրտի զեղմունքին եւ մահմետական մեծատան կնոջից խաբւում է: Կնոջ ամուսին աղգեցիկ խանը զրկում է նրան կեանքից, մարմինը ամփոփում իր պարտէզի ծառի տակը եւ դիշերանց անհետացնում:

Փնտռուների են ելնում դպրոցը, իր տնեցիք, բարեկամները, ոստիկանութիւնը. խուզարկւում են կասկածելի տներ, պարտէզներ, եւ ապարդիւն է անցնում, ոչ մի հետք չեն կարողանում գտնել:

Խաները այն ժամանակ դեռ ուժեղ

էին, երկիւղ ազդող, ոստիկանութիւնը եւ դաւառական վարչութիւնները՝ ենթակայ դրամի եւ վախի: Արովեանի մերձաւորները ամօթի՞ց, վախի՞ց, թէ՞ մեղադրելու փաստացի տեսլներ ներկայացնելու հնարաւորութիւնից զուրկ՝ հետապնդումները դադարեցնում են եւ տեղի տալիս առեղծւածներին:

Արովեանի մահան պարագաները շատերը գիտէին եւ երկար ժամանակ ծածուկ բերնէ բերան պատմում: Ահա այս է ճշմարտութիւնը:

X.

«ԱՆՅՈՒՇ» ԹԻ՞՞ «ԱՆՈՒՇ»

Յայտնի է, որ մեր Արշակ Թադաւորը խորկանքով ընկաւ Շապուհի ճանկը եւ ի տրիտուր իր թեթեւամիտ հաւատքին դատապարտեց Խուժիստանի մի բերդի մէջ բանտարկութեան, ուր եւ դառաւ իր մահը 369 թւին:

Մեր հին գրիչները, պատմաբանները մեծ մասամբ բերդը յիշում են «Անյուշ» անւամբ, իբրեւ անյիշելի, անյիշատակելի, չյիշելիք վայր. շատ քչերը գերում են «Անուշ»: Այս ձեւը չարունակւում է այժմ. մեծ մասը այժմ գրում է «Անյուշ բերդ»:

Այսօր այդ բերդը կայ, դոնում է Խուժիստանում, Թեհրան-Բաղդատ մեծ բանուկ ճանապարհի վրա, կոչւում է Կասր Շիրին կամ Ղասր Շիրին: Մեր հայ ինքնաշարժների վարիչները նրա

մօտով անցնելիս, բացականչում են՝ «Ահա մեր Արշակ Թադաւորի բերդբանտը»:

Կասր կամ Ղասր նշանակում է պալատ, բերդ. շիրին՝ քաղցր, անուշ: Կասրը Շիրինի անունը ըստ պարսից աւանդալէպերի ծագում է հայ օրիորդ Շիրինի անունից, որ եղել է գրաւիչ գեղեցկուհի, գերել է պարսից Թադաւորի սիրտը, եւ Թադաւորը բլրի վրա պարսպապատ մեծ փարթամ ապարանք է կառուցել իր սիրելի Շիրինի համար ու անունը կոչել՝ Շիրինի ապարանք, Շիրինի բերդ, Անուշ բերդ:

Այս պարզաբանութիւնից յետոյ պարզ է թէ պէտք է գրել «Անուշ» եւ ոչ թէ «Անյուշ»:

X.

Ս. ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍԸ

Նկարիչ Ս. Խաչատրեանի երկրորդ պատկերահանդէսը Փարիզի Ժորժ Պրտի սրահում մարտ-ապրիլին (առաջինը տեղի էր ունեցել երկու տարի առաջ Գիւմէ թանգարանում), ինչպէս եւ առաջինը նւիրւած էր պարսկական նկար-

չութեան: Նկարների այս շարքով Խաչատրեանը սպասել է Սպահանում յայտնադորձած նւթը:

Միայն տեղւոյն վրա ուսումնասիրութիւն կատարած մարդիկ ի վիճակի կը լինեն ասելու, թէ Խաչատրեանի նկար-